Ա-70

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՌԱՖԱԵԼԻ

ՄԻՋԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 1991-2011 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Է. 00.02- «Համաշխարհային պատմություն»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2023

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ռ. Կ. Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ա. Պ. Փոլադյան

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Ա. Փաշայան

Առաջատար կազմակերպություն՝

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2023թ. հուլիսի 4-ին, ժամը 12:00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019 Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է՝

2023թ-ի մայիսի 23-ին

Մասնագիտական խորհրդի գիտքարտուղար՝

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գ. Ա. Մարգարյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը

Միջարաբական հարաբերությունները միջազգային հարաբերությունների կարևոր բաղադրիչն են և դրանց ուսումնասիրությունն ունի ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական և գործնական նշանակություն: Միջարաբական հարաբերությունները տարբեր ժամանակահատվածներում աչքի են ընկել հակասականությամբ՝ սերտ համագործակցությունից մինչև հարաբերությունների սրում: Տարածաշրջանային կերպափոխումների արդի փուլում միջարաբական հարաբերությունների տարբեր դրսևորումները դժվար է ճիշտ ընկալել առանց ուսումնասիրվող ժամանակաշրջանում դրանց առանցքային դրսևորումների բազմակողմանի հետազոտության:

Միջարաբական բազմաշերտ հարաբերությունների ուսումնասիրությունը մշտապես գտնվել է մասնագիտական շրջանակների ուշադրության կենտրոնում, քանի որ այդ հարաբերությունների հակասական դրսևորումներով են նաև պայմանավորված արդի Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շատ իրողություններ, ինչպես նաև՝ արաբ-իսրայելական հակամարտության ընթացքն ու զարգացումը և դրա կարևոր բաղադրիչը համարվող՝ Պաղեստինի հիմնախնդրի կարգավորման հարցը:

Արաբական աշխարհի բազմադեմ և բազմաշերտ լինելու հանգամանքը, պատմական և քաղաքական զարգացման տարբեր ընթացքները, մեծ տերությունների վարած քաղաքականությունը և արաբական երկրների հետապնդած պետական շահերը մեծապես խոչընդոտել են արաբական աշխարհի միասնությանը՝ միջարաբական ներդաշնակ համագործակցության հաստատմանը:

Միջարաբական համագործակցության և դրանցում առկա խնդիրներն առավել ցայտուն դրսևորվեցին երկրորդ համաշխարհային պատերազմից և 1948 թ. Իսրայել պետության ստեղծումից հետո: Հակասություններն ունեին ինչպես քաղաքական, այնպես էլ՝ տնտեսական բնույթ: Այս ընթացքում արաբական պետությունների միջև դրսևորվեցին նաև ինտեգրման և համագործակցության մի շարք փորձեր՝ ինչպիսիք էին օրինակ Արաբական պետությունների լիգայի կազմավորումը, Արաբական Միացյալ Հանրապետության հռչակումը, միջպետական տարբեր համաձայնագրերի կնքումը և այլն:

2011 թ.-ից արաբական երկրներում ընթացող վերափոխումները, որ ստացել են «Արաբական գարուն» անվանումը և դրան հաջորդած զարգացումները Մերձավոր Արևելքում ստեղծել են աշխարհաքաղաքական նոր իրավիճակ, որը հանգեցրել է հին դաշինքների վերանայմանը և համագործակցության նոր ձևաչափերի որոնմանը: Այդ գործընթացում մեծապես կարևորվում է միջարաբական համագործակցության հարցերի լայն շրջանակի քննությունը: Իսրայելի հետ արաբական երկրների հնարավոր համագործակցության նոր

պատմական փուլը մեծապես ազդելու է Պաղեստինի հիմնախնդրի կարգավորման ընթացքի և արդյունքների վրա:

Միջարաբական համագործակցության և ինտեգրման ձևաչափերից, բնույթից և գործնական իրականացումից է մեծապես կախված Մերձավոր Արևելքում ձևավորվող նոր ուժային համակարգում, փոփոխվող տարածաշրջանում և ընդհանրապես միջազգային հարաբերություններում արաբական երկրների կշիռն ու ազդեցությունը:

Սույն աշխատանքն արդիական է նաև Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային քաղաքականության հիմնադրույթների մշակման և Հայաստան-արաբական երկրներ հարաբերությունների ուսումնասիրման տեսանկյունից՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մերձավորարևելյան ուղղության կարևորությունն ու արաբական մի շարք երկրների հետ գործընկերային հարաբերությունների առկայությունը: Թեմայի արդիականությունը հիմանվորվում է նաև արաբական տարբեր երկրներում հայ համայնքների գոյությամբ, որը ևս էական գործոն է հայ-արաբական բազմաշերտ հարաբերություններում:

Ատենախոսության նպատակները

Ուսումնասիրվող ժամանակահատվածում միջարաբական հարաբերությունների բազմաբնույթ և բազմաշերտ լինելու փաստով պայմանավորված՝ ատենախոսության շրջանակում հետազոտվել են համագործակցության մի շարք առանցքային հիմնախնդիրներ, քանի որ մեկ աշխատանքի շրջանակներում անհնար է հետազոտել այդ հարաբերությունների ամբողջական ներկապնակը: Ատենախոսության հիմնական նպատակներն են.

- Ամփոփ ներկայացնել մինչև 1991 թ. միջարաբական հարաբերությունների զարգացման ընդհանուր բնույթն ու դրսևորումները,
- Ուսումնասիրվող ժամանակահատվածում հետազոտել արաբական տարբեր երկների տարածաշրջանային քաղաքականության առանցքում Պաղեստինի հիմնախնդրի նկատմամբ մոտեցումներն ու դիրքորոշումների առանձնահատկությունները,
- Վերոնշյալ ժամանակահատվածում վերլուծել Իսրայելի հետ հնարավոր համագործակցությամբ պայմանավորված միջարաբական հակասությունները և դրանց ազդեցությունն արաբական երկրների միջև հարաբերությունների վրա,
- Ուսումնասիրել Ծոցի 2-րդ ճգնաժամի ընթացքում (1990-1991թթ.) միջարաբական հակասությունների սրման դրդապաճառներն ու դրանց հետևանքները,
- Վերլուծել 2006 թ. Լիբանանում Իսրայելի «Հիզբալլահ» շիայական շարժման դեմ իրականացրած ռազմական գործողությունների նկատմամբ համաարաբական մոտեցումների և հակասությունների պաճառներն ու հետևանքները,
- Հետազոտել տարածաշրջանում միջարաբական համագործակցության և ինտեգրման փորձերը՝ Արաբական պետությունների լիգա ու Ծոցի համագործակցության խորհուրդ կազմակերպությունների օրինակներով:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները

Ժամանակագրական առումով ատենախոսությունը ներառում է 1991-2011 թթ.: Ժամանակագրական սահմանի սկիզբ է ընտրվել 1991 թ., երբ հոկտեմբերին Մադրիդում տեղի ունեցավ մերձավորարևելյան հակամարտության խաղաղ կարգավորման համաժողովը, որտեղ առաջին անգամ բանակցային սեղանի շուրջ նստեցին արաբ-իսրայելական հակամարտության մեջ ներգրավված բոլոր կողմերը: Ատենախոսության ժամանակային շրջանակի վերջնակետ է ընտրվել 2011 թ., երբ «Արաբական գարնան» գործընթացներով պայմանավորված տարածաշրջանը թևակոխեց վերափոխումների և ուժերի հարաբերակցության փոփոխման նոր փուլ: Ուսումնասիրվող շրջանում միջարաբական համագործակցության առանցքային հիմնահարցերի ամբողջական հետազոտության նպատակով՝ համառոտ անդրադարձ է կատարվել նաև մինչև աշխատանքի ժամանակագրական սկզբնակետն ընկած հատվածում միջարաբական հարաբերությունների որոշ դրսևորումների հետազոտմանը, որոնք անմիջական ազդեցություն են ունեցել այդ հարաբերությունների հետագա զարգացման վրա:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության շրջանակում առաջին անգամ փորձ է արվել տարալեզու աղբյուրների և գիտական գրականության օգտագործմամբ՝ համապարփակ ուսումնասիրել 1991- 2011 թթ. Արաբական Արևելքում տեղի ունեցող առանցքային զարգացումները՝ դրանք դիտարկելով միջարաբական բազմաշերտ համագործակցության տեսանկյունից: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում համապարփակ և համակողմանիորեն հետազոտվել են միջարաբական հարաբերությունների առանձնահատկությունները, դրանց վրա ներազդող տարածաշրջանային և ոչ տարածաշրջանային գործոններն ու ազդեցությունները:

Նշված ժամանակահատվածում միջարաբական հարաբերությունների զարգացումը դիտարկվել է ինչպես հակասությունների, այնպես էլ համագործակցության փորձերի բազմակողմանի հետազոտությամբ:

Ատենախոսության շրջանակում նորույթ է նաև ուսումնասիրվող շրջանում Ծոցի համագործակցության խորհրդի և Արաբական պետությունների լիգայի՝ որպես միջարաբական ինտեգրման և համագործակցության համեմատաբար ստացված փորձերի ուսումնասիրությունը: Վերոնշյալ կազմակերպությունների

ստեղծման, գործունեության և նպատակների վերաբերյալ կան առանձին ուսումնասիրություններ և հոդվածներ, սակայն հատկապես 1991-2011 թթ. ներառող շրջանում այս կազմակերպությունների գործունեությունն ու դրանց առանցքում միջարաբական համագործակցության զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրությունը դեռևս չի դարձել առանձին, համակողմանի քննության առարկա:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած է վերոնշյալ ժամանակահատվածում միջարաբական համագործակցության առանցքային հիմնահարցերի, դրանց վրա տարածաշրջանային և ոչ տարածաշրջանային ազդեցությունների, միջարաբական հակասությունների պատմահամեմատական և պատմավերլուծական ուսումնասիրությունը, ինչպես նաև աղբյուրագիտական նյութի վերլուծությունն ու փաստերի համեմատական-համադրական հետազոտությունը:

Աշխատանքի կիրառական նշանակությունը

Աշխատանքում առաջ քաշված հիմնական դրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել միջազգային հարաբերությունների կարևոր բաղադրիչ համարվող միջարաբական հարաբերությունների ուսումնասիրման համար: Դրանք կարող են ներառվել արաբական երկրների արդի շրջանի պատմության դասագրքերում, բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնագիտական դասընթացներում, ինչպես նաև ընդհանուր կրթական թեմատիկ ծրագրերում:

Աշխատանքում տեղ գտած տարբեր գնահատականներն ու մեկնաբանությունները կարող են կիրառվել Հայաստանի Հանրապետության համապատասխան պետական մարմիններում՝ արաբական տարբեր երկրների հետ հարաբերությունների մշակման, ինչպես նաև վերլուծական նյութերի պատրաստման նպատակով:

Աշխատանքի փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը

Ատենախոսությունը քննարկել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժինը: Աշխատանքի հիմնական դրույթներն ու եզրակացությունները ներկայացվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում, ինչպես նաև թեմային առնչվող գիտաժողովներին ներկայացված զեկուցումներում:

Օգտագործված գրականության համառոտ տեսություն

Գիտական աշխատանքը գրվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն և արաբերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրների և գիտական գրականության

հիման վրա: Հետազոտության իրականացմանը մեծապես նպաստել են Արաբական պետությունների լիգայի և Ծոցի համագործակցության խորհրդի ընդունած բանաձևերի և որոշումների բազմակողմանի վերլուծությունը, պաշտոնական հրատարակությունները, քաղաքական տարբեր գործիչների հայտարարություններն ու ելույթները, պարբերականները, հայ և օտարազգի հետազոտողների՝ վերոնշյալ թեմային նվիրված արժեքավոր աշխատություններն ու գիտական հրապարակումները:

Սույն ատենախոսության մեջ քննարկվող մի շարք հիմնահարցերի ուսումնասիրման համար որպես սկզբնաղբյուր են ծառայել Արաբական պետությունների լիգայի և Ծոցի համագործակցության խորհրդի կանոնադրությունները[1] և հիմնարար այլ փաստաթղթերը[2]: Աշխատանքում քննարկվող մի շարք հիմնահարցերի լուսաբանման համար որպես սկզբնաղբյուր են ծառայել նաև ուսումնասիրվող շրջանում կնքված տարբեր համաձայնագրերը[3], ՄԱԿ-ի ԱԽ ընդունած բանաձևերը, որոնք վերաբերում են արաբ-իսրայելական հակամարտությանն ու պաղեստինյան հիմնահարցին[4], 2003 թ. ԱՄՆ Իրաք

---

[1] Աշխատանքի հավելված 1 և 2-ում հայերեն թարգմանությամբ ներկայացված են Արաբական պետությունների լիգային և Ծոցի համագործակցության խորհրդի կանոնադրությունները:

[2] Տե՛ս "Pact of the League of Arab States, March 22, 1945" Yale Law School, Lillian Goldman Law Library
https://avalon.law.yale.edu/20th_century/arableag.asp (17/11/2022),
"The Charter of the Cooperation Council for The Arab States of the Gulf" GCC Official Website
https://www.gcc-sg.org/en-us/AboutGCC/Pages/Primarylaw.aspx (17/11/2022),
The Arab League Involvement in the Gulf war
https://groundviewunlocked.wordpress.com/2016/02/07/the-arab-leagues-involvement-in-the-gulf-war-
19901991/http://www.leagueofarabstates.net/ar/councils/lascouncil/Pages/default.aspx?RID=75&Ctype=1 (28/11/2022),
M. Nazemroaya, Arab League Summits and War, Centre for Research on Globalization
http://www.payvand.com/news/08/apr/1062.html (28/11/2022):

[3] The Camp David accords
https://www.google.com/url?sa=i&rct=j&q=&esrc=s&source=web&cd=&cad=rja&uact=8&ved=0CAMQw7AJahcKEwioqYTH69L7AhUAAAAAHQAAAAAQAw&url=https%3A%2F%2Fwww.peaceau.org%2Fuploads%2Fcamp-david-accords-egypt-
1978.pdf&psig=AOvVaw2fTmhy18t8oYdZIeukLB0X&ust=16697923663 (28/11/2022):

[4] United Nations. The Question of Palestine
https://www.un.org/unispal/data-collection/general-assembly/ (28/11/2022),
List of United Nations resolutions concerning Israel
https://www.google.com/url?sa=i&rct=j&q=&esrc=s&source=web&cd=&cad=rja&uact=8&ved=0CAMQw7AJahcKEwiYiq287dL7AhUAAAAAHQAAAAAQAw&url=https%3A%2F%2Ficarabe.org%2Fsites%2Fdefault%2Ffiles%2Fpdfs%2Fa_historia_da_palestina_-
list_of_united_nations_resolutions_concerning_israel.doc&psig=AOvVaw3TKLtRgAxd6JwZbbQUmUcH&ust=1669792674463480 (28/11/2022):

ներխուժմանը, 2006 թ. Իսրայելի Լիբանանի նկատմամբ ռազմական գործողությունների իրականացմանը և այլն[5], ինչպես նաև 1991 թ. Մադրիդի համաժողովի փաստաթղթերը[6], Օսլո 1 և Օսլո 2 համաձայնագրի փաստաթղթերը[7] և այլն:

Ատենախոսության մեջ քննարկվող մի շարք հարցերի լուսաբանմանը մեծապես նպաստել են հայ արևելագետներ Նիկոլայ Հովհաննիսյանի[8], Ռուբեն Կարապետյանի[9], Շահեն Կարամանուկյանի[10], Արաքս Փաշայանի[11], Լիլիթ

[5] UN Security Council resolutions relating to Iraq
http://www.casi.org.uk/info/scriraq.html (28/22/2022),
UN Peacemaker. Security council resolution 1701
https://peacemaker.un.org/israellebanon-resolution1701 (28/11/2022),
UN Digital Library, Resolution 1680 & Resolution 1559
https://digitallibrary.un.org/record/575280?ln=en (28/11/2022),
https://digitallibrary.un.org/record/529421?ln=en (28/11/2022):

[6] F. Rodriguez, "The 1991 Madrid Peace Conference: U.S. Efforts Towards Lasting Peace in the Middle East Between Israel and its Neighbors" (2011). University of New Orleans Theses and Dissertations
https://www.google.com/url?sa=i&rct=j&q=&esrc=s&source=web&cd=&cad=rja&uact=8&ved=0CAQQw7AJahcKEwiYq7PX8NL7AhUAAAAAHQAAAAAQAw&url=https%3A%2F%2Fscholarworks.uno.edu%2Fcgi%2Fviewcontent.cgi%3Farticle%3D2327%26context%3Dtd&psig=AOvVaw2hOC_HoP6a11qhXVxzoG4w&ust=1669793687966864 (28/11/2022),
The 1991 Madrid Peace Conference, Association for Diplomatic studies and training, 2015
https://adst.org/2015/10/the-1991-madrid-peace-conference/ (28/11/2022):

[7] UN Peacemaker. Declaration of Principles on Interim Self-Government Arrangements (Oslo Accords)
https://peacemaker.un.org/israelopt-osloaccord93 (28/22/2022),
Z. Abuzayyad, Israel and Palestine – Last chance for the bilateral process
https://www.google.com/url?sa=i&rct=j&q=&esrc=s&source=web&cd=&cad=rja&uact=8&ved=0CAQQw7AJahcKEwjlgcfp8tL7AhUAAAAAHQAAAAAQAw&url=https%3A%2F%2Fwww.corteidh.or.cr%2Ftablas%2Fr32514.pdf&psig=AOvVaw2r6VWmq5IzkoJddYq_hDtr&ust=1669794232058068 (28/11/2022),
Oslo Accords, Center for Israel Education
https://israeled.org/resources/documents/oslo-accords/ (28/11/2022):

[8] Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, 2-րդ հատոր, 2004, Երևան, 677 էջ,
Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, 3-րդ հատոր, 840 էջ:

[9] Ռ. Կարապետյան, Սիրիայի տեղն ու դերը արաբ-իսրայելական հակամարտությունում (1946-2000թթ), Կահիրե, 2008թ, 352 էջ,
Ռ. Կարապետյան, Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003թ, 408 էջ:

[10] Շ Կարամանուկյան, Արաբական պետությունների լիգայի դերը արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում, Երևան, 1988, 204 էջ:

[11] Ա. Փաշայան. Արաբական պետությունների լիգայի գագաթնաժողովը. 23.04.2007
http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=808 (22/04/2023):

Հարությունյանի[12], Գոռ Գևորգյանի[13], Արամ Գասպարյանի[14] և այլոց աշխատություններն ու գիտական հրապարակումները: 20-րդ դարի սկզբին արաբական երկրներում ընթացող զարգացումների և միջարաբական հակասական հարաբերությունների ուսումնասիրման տեսանկյունից անգնահատելի են Ն. Հովհաննիսյանի աշխատությունները: Ռ. Կարապետյանի աշխատանքները մեծապես նպաստել են 1991 թ.-ից մինչև 2000-ականների սկիզբն ընկած ժամանակահատվածում միջարաբական հակասությունների ու համագործակցության որոշ հիմնահարցերի հետազոտության համար: Շ. Կարամանուկյանի աշխատությունը հնարավորություն է տալիս ուսումնասիրել Արաբական պետությունների լիգայի ստեղծման և գործունեության ժամանակաշրջանը՝ ընդհուպ մինչև 1980-ականները:

Ռուսաստանցի հեղինակներ Ե. Պրիմակովի[15], Ա. Բովինի[16], Լ. Վալկովայի[17], Ա. Ցիգանոկի[18], Լ. Ռիդենկոյի ու Զ. Սալավյովայի[19] և այլոց ուսումնասիրությունները ևս մեծ կարևորություն են ներկայացնում թեմայի տարբեր ասպեկտների քննության համար: Այդ հետազոտություններում առկա են բազմաթիվ կարևոր փաստեր, որոնք էապես նպաստել են միջարաբական հարաբերությունների ու դրանց վրա արտաքին ազդեցությունների հետազոտմանը:

Արևմտյան հետազոտողներից անհրաժեշտ ենք համարում առանձնացնել Ջ. Կելլիի[20], Մ. Ռիադի[21], Ս. Սմիթի, Ա. Հեդֆիլդի և Թ. Դուննի[22], Ա. Դրայսդելի և

[12] Լ. Հարությունյան, Լիբանանը 1958-1990 թթ., Երևան, 2007, 337 էջ,
Լ. Հարությունյան, Լիբանանում շիական գործոնի ուժեղացման հարցի շուրջ (1970-1980-ական թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հ. 23, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության Ինստիտուտ, Երևան, 2004, էջ 133-147,
Լ. Հարությունյան, Լիբանանը կայունության և ճգնաժամի միջև, «21-րդ ԴԱՐ», թիվ 2 (16), 2007թ, էջ 26-45:

[13] Գ. Գևորգյան, Եգիպտոսի արտաքին քաղաքականության արաբական ուղղությունը նախագահ Հոսնի Մուբարաքի իշխանության առաջին տասնամյակում (1981-1991 թթ.), Երևան, 2018, 231 էջ:

[14] Ա. Գասպարյան, Արաբ ազգայնականները և երիտթուրքերը. Համագործակցությունից առճակատում (1908-1914), Երևան, 2016, էջ 195:

[15] Е. Примаков, Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами, Москва, 2016, 415 էջ:

[16] А.Бовин, 5 Лет среди евреев и мидовцев, Москва, Захаров город, 2000, 196 էջ:

[17] Л. Валькова, Саудовская Аравия: Нефть, Ислам, Политика, Москва, 1987, 252 էջ:

[18] А.Цыганок, Русский Взгляд на Израильские Войны: Вторая Ливанская-2006, в Секторе Газа-2009, Москва, 2011, 349 էջ:

[19] Л. Рыденко, З.Соловьева, Лига Арабских Государств и Интеграционные Процессы в Арабском Мире, Москва, Ин-т востоковедения РАН, 2007, 164 էջ:

[20] J.B.Kelly, Arabia, The Gulf and The West, London, 1980, 530 էջ:

[21] M. Riad, The Struggle for Peace in the Middle East, London, Malbourne-New York, 1981, 392 էջ:

[22] S. Smith, A. Hadfield, T. Dunne, Foreign policy: Theories, Actors, Cases, Oxford, 2012, 543 էջ:

Ռ. Հիններբուշի[23], Հ. Աշրավիի[24], Ն. Կիրդարի[25], Յ. Բադանսկիի[26] և այլոց հետազոտությունները: Մասնավորապես Ջ. Կելլիի աշխատանքը մեծապես նպաստել է Ծոցի արաբական միապետությունների համաարաբական տարատեսակ խնդիրների նկատմամբ դիրքորոշումների հստակեցմանն ու ճշգրտմանը: Ա. Դրայսդելի և Ռ. Հիններբուշի աշխատությունները շատ կարևոր են միջարաբական հարաբերություններում Սիրիայի դերի ու նշանակության գնահատման տեսանկյունից: Հ. Աշրավիի հետազոտությունը էական դեր է ունեցել 1991 թ. Մադրիդի համաժողովի նպատակների և արդյունքերի քննության համար: 2003 թ. ԱՄՆ Իրաք ներխուժման պատճառների և հետևանքների բազմակողմանի վերլուծությանը մեծապես նպաստել է Յ. Բադանսկիի գիտական աշխատանքը:

Արաբական պետությունների լիգայի և Ծոցի համագործակցության խորհրդի նպատակների, ուսումնասիրվող ժամանակաշրջանում գործունեության, կազմակերպությունների առանցքում միջարաբական համագործակցության, որոշ դեպքերում նաև հակասությունների հետազոտությանը մեծապես նպաստել են Ալ-Աշալ Աբդալլահի[27], Հեշամ Յուսեֆի[28], Մարկո Պինֆարի[29], Ի. Ալեկսանդրովի[30], Քրիստիան Կ. Ուլրիչսենի[31] և այլոց ուսումնասիրությունները:

Ատենախոսության մեջ լայնորեն օգտագործվել են Արաբական պետությունների լիգայի և Ծոցի համագործակցության խորհրդի գլխավոր քարտուղարների, կազմակերպությունների տարբեր մարմինների ղեկավարների,

---

[23] A. Drysdale and R. A. Hinnebusch, Sirya and the Middle East Peace Process, New York, USA, 1991, 244 էջ:

[24] H. Ashrawi, This Side of Peace: A Personal Account. New York: Simon & Schuster, 1995, 320 էջ:

[25] N. Kirdar, Saving Iraq.Rebuilding a broken nation, London, 2009, 320 էջ:

[26] Y. Badansky, The secret History of the Iraq war. USA. 2004. 570 էջ:

[27] A. Al-Ash'al, The Evolution of the International Relations of the GCC in the Light of Regional and Global Variables [in Arabic]. Cairo: Gulf Centre for Strategic Studies, 1999 https://studies.aljazeera.net/ar/node/1062 (28/11/2022):

[28] Y. Hesham, Mediation and Conflict Resolution in the Arab World: The Role of the Arab League, https://www.google.com/url?sa=i&rct=j&q=&esrc=s&source=web&cd=&cad=rja&uact=8&ved=0CAMQw7AJahcKEwiYp6aar977AhUAAAAAHQAAAAAQAw&url=https%3A%2F%2Fifsh.de%2Ffile-CORE%2Fdocuments%2Fyearbook%2Fenglish%2F13%2FYoussef-en.pdf&psig=AOvVaw1Y6L1Ib0UZsnluJkY1UVmC&ust=1670188513195776 (04/12/2022):

[29] Marco Pinfari, Nothing but Failure? The Arab League and the Gulf Cooperation Council as Mediators in Middle Eastern Conflicts. International Relations Department. London School of Economics and Political Science. March 2009 http://citeseerx.ist.psu.edu/viewdoc/download?doi=10.1.1.469.8564&rep=rep1&type=pdf :

[30] Александров И.А., Монархии Персидского Залива: этап модернизации, Москва, 2000, 544 էջ:

[31] K. C. Ulrichsen, Missed opportunities and failed integration in the GCC, Arab Center Washington DC, Jun 1 2018 https://arabcenterdc.org/resource/missed-opportunities-and-failed-integration-in-the-gcc/ (28/11/2022):

արաբական տարբեր երկրների առաջնորդների, քաղաքական գործիչների ելույթներն ու հայտարարությունները, ինչպես նաև արաբական, բրիտանական, ամերիկյան և իսրայելական մուտքն ու էլեկտրոնային տարաբնույթ աղբյուրներ:

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, որոնք իրենց հերթին ստորաբաժանվում են ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից ու հավելվածներ 1 և 2-ից, որոնցում հայերեն թարգմանված ներկայացված են Արաբական պետությունների լիգայի և Ծոցի համագործակցության խորհրդի կանոնադրությունները:

Ներածության մեջ խոսվում է թեմայի արդիականության և աշխատանքի նպատակների մասին, հիմնավորվում է գիտական նորույթը, աշխատանքի գործնական նշանակությունը և տրվում են թեմայի ժամանակագրական սահմաններն ու օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունները:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «ՄԻՋԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ. ՊԱՂԵՍՏԻՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ», բաղկացած է 3 ենթագլուխներից, որոնցում ուսումնասիրվում են արաբական երկրների պաղեստինյան հիմնախնդրի նկատմամբ դիրքորոշումները, այդ հարցում արաբական աշխարհում առկա տեսակետներն ու դրանց տարբերությունները:

«Միջարաբական համագործակցության հանգուցային հիմնահարցերը մինչև 1991 թ.. համառոտ ակնարկ» առաջին ենթագլխում անդրադարձ է կատարվում մինչև 1991 թ. արաբական երկրների միջև համագործակցության առանցքային հիմնահարցերին: Մասնավորապես լուսաբանվում են արաբականության գաղափարախոսության առանցքային դրսևորումներն արաբական աշխարհում, դրա զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև պաղեստինյան հիմնահարցի ընկալումներն արաբական աշխարհում, այդ հարցի վերաբերյալ արաբական տարբեր երկրների մոտեցումներն ու դրանց շուրջ միջարաբական համագործակցության դրսևորումները:

Երկրորդ ենթագլխում՝ **«Մադրիդի խաղաղության համաժողովը»**, հանգամանորեն ուսումնասիրվում է 1991 թ. Մադրիդի խաղաղության համաժողովի նպատակներն ու արդյունքները: Առաջին անգամ ԱՄՆ նախաձեռնությամբ հնարավոր եղավ բանակցային սեղանի շուրջ համախմբել արաբ-իսրայելական համակարգության բոլոր կողմերին: Մանրամասն հետազոտվում է համաժողովի նախապատրաստմանն ուղղված ԱՄՆ դիվանագիտական ջանքները, Իսրայելի և արաբական տարբեր երկրների՝ Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, Հորդանան և ՊԱԿ, հետ բանակցությունների առանձնահատկությունները, պաղեստինյան հիմնահարցի նկատմամբ

արաբական տարբեր երկրների դիրքորոշումների տարբերություններն ու հնարավոր համագործակցության հեռանկարները:

Երրորդ ենթագլխում՝ **«Պաղեստինի հիմնախնդրի կարգավորմանն ուղղված հետագա փորձերը»**, քննարկվում է 1992 թ.-ից սկսած արաբ-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված առարկայական քայլերն ու դրանց նկատմամբ արաբական երկրների դիրքորոշումները: Հետազոտվում է Օլսո 1 և Օսլո 2 համաձայնագրերի ստորագրման նախադրյալներն ու դրանց արդյունքները: Ուսումնասիրվում են ինչպես միջարաբական համագործակցության դրսևորումներն, այնպես էլ արաբական երկրների միջև առկա հակասությունները՝ պայմանավորված պաղեստինյան հարցի կարգավորման նկատմամբ տարբեր դիրքորոշումներով: Արաբական տարբեր երկրների վարչակարգերը միակարծիք չէին պաղեստինյան հիմնախնդրի կարգավորման հարցերում, իսկ պաղեստինյան քաղաքական կազմավորումներն իշխանության համար պայքարը գերադասում էին անկախության համար միասնական պայքարից: Գործնականում՝ պետական ու անձնական շահն ավելի բարձր դասվեց համաարաբական շահից:

Աշխատանքի 2-րդ գլխում՝ **«ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ – ԻՍՐԱՅԵԼ. ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՓՈՐՁԵՐ»**, քննության է ենթարկվում արաբական առանձին երկրների՝ Եգիպտոս, Լիբանան, Հորդանան, Իսրայելի հետ անջատ խաղաղություն հաստատելու փորձերը, դրանց արդյունքում արաբական աշխարհում խորացող հակասություններն ու բևեռացման գործընթացը:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Իսրայելի հետ խաղաղության հաստատման միտումներն արաբական աշխարհում»**, ուսումնասիրվում է ԱՄՆ հովանու ներքո արաբական առանձին երկրների Իսրայելի հետ խաղաղության կնքման և դիվանագիտական հարաբերություններ հաստատելու փորձերը: Այս գործընթացը դիտարկվում է արաբական աշխարհում հակասությունների սրման և միջարաբական համագործակցության դրսևորումների հետազոտման լույսի ներքո: Հակաիսրայելական դիրքորոշում ցուցաբերելով հանդերձ՝ արաբական մի շարք երկրներ իրականում փորձում էին (իսկ ոմանք նույնիսկ հաջողեցին՝ Եգիպտոս, Հորդանան) փոխշահավետ խաղաղություն հաստատել Իսրայելի հետ:

Այս գլխի երկրորդ ենթագլխում՝ **«2006 թ. լիբանանաիսրայելական պատերազմը և արաբական երկրների արձագանքը»**, քննության է ենթարկվում 2006 թ. Իսրայելի՝ Լիբանանի տարածքում շիայական «Հիզբալլահ» շարժման դեմ ռազմական գործողություններն ու դրանց նկատմամբ արաբական տարբեր երկրների դիրքորոշումները: Լուսաբանվում է 1982 թ. հետո Լիբանանում «Հիզբալլահ» շարժման քաղաքական և ռազմական դերի ուժեղացման հետևանքներն ու դրանց նկատմամբ արաբական երկրների դիրքորոշումները: 1980-ականներից հետո «Հիզբալլահը» գլխավորեց Լիբանանում Իսրայելին դիմակայող ուժերի ճակատը: Այս գործում այն զգալի քաղաքական, ռազմական և

նյութական աջակցություն էր ստանում Իրանից, մասամբ նաև՝ Սիրիայից: Արաբական երկրները՝ մասնավորապես Ծոցի սուննիական միապետություններն ու Եգիպտոսը զգուշանում էին արաբական որևէ երկրում՝ տվյալ դեպքում Լիբանանում, Իրանի ազդեցության ուժեղացումից: 2006 թ. լիբանանաիսրայելական հակամարտության ընթացքում ևս արաբական երկրները չդրսևորեցին միասնություն: Այդ երկրներից յուրաքանչյուրն, իր շահերից և արտաքին քաղաքական առաջնահերթություններից ելնելով արձագանքեց լիբանանյան ճգնաժամին: Այս հակամարտությունն ի ցույց դրեց նաև արաբական աշխարհում առկա սուննի-շիա հակասությունների սրումը:

Ատենախոսության երրորդ գլխում՝ **«ԻՐԱՔԸ ԵՎ ՄԻՋԱՐԱԲԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՈՒՄԸ»**, հետազոտվում է 1990-1991 թթ. Ծոցի երկրորդ ճգնաժամի՝ Իրաքի Քուվեյթ և 2003 թ. ԱՄՆ Իրաք ներխուժմամբ պայմանավորված միջարաբական հակասությունների սրման գործընթացն ու տարածաշրջանում ուժերի հարաբերակցության փոփոխությունն ու դրա հետևանքները:

Այս գլխի առաջին ենթաբաժնում՝ **«Ծոցի 2-րդ ճգնաժամն ու միջարաբական հարաբերությունների առանձնահատկությունները (1990-1991 թթ.)»**, ուսումնասիրվում է Իրաքի՝ Քուվեյթ ներխուժման արդյունքում արաբական աշխարհում համագործակցության դրսևորումներն ու հակասությունների սրման գործընթացը: Լուսաբանվում է Սիրիա-Եգիպտոս-Սաուդյան Արաբիա առանցքի ձևավորումը, որն իրական հնարավորություն տվեց արաբ-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման հետագա գործընթացի համար ևս: Վերոնշյալ առանցքը դարձավ տարածաշրջանում վերջին տարիներին միջարաբական համագործակցության ամենանշանակալի օրինակներից մեկը:

Գլխի երկրորդ ենթաբաժնում՝ **«2003 թ. ամերիկյան ներխուժումն Իրաք»**, լուսաբանվում են 2003 թ. ԱՄՆ Իրաք ներխուժման դրդապաճատներն ու դրա հետևանքներն Իրաքում և ողջ Մերձավոր Արևելքում: Հետազոտվում է 2003 թ. Իրաքում պատերազմի արդյունքում տարածաշրջանում ուժերի հավասարակշռության խախտման ու այստեղ ռազմաքաղաքական նոր իրավիճակի ստեղծման գործընթացը: 2003 թ. ներխուժումը հանգեցրեց արաբական աշխարհի էլ ավելի մասնատմանն ու թուլացմանը:

Ատենախոսության չորրորդ գլուխը՝ **«ՄԻՋԱՐԱԲԱԿԱՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ»**, հետազոտում է արաբական երկրները միավորող 2 կազմակարպությունները՝ Արաբական պետությունների լիգան և Ծոցի համագործակցության խորհուրդը, դրանց նպատակներն և գործունեությունը, վերլուծում է միջարաբական բազմաբնույթ համագործակցության առանձնահատկությունները, ի ցույց դնում դրանց արդյունավետությունն ու ոչ արդյունավետության պատճառները:

Այս գլխի առաջին ենթաբաժնում՝ **«Արաբական պետությունների լիգա (ԱՊԼ). գործունեություն և նպատակներ»**, քննարկվում է ուսումնասիրվող

շրջանում Արաբական պետությունների լիգայի գործունեության առանձնահատկությունները, կազմակերպության շրջանակում միջարաբական համագործակցության դրսևորումները, որոշ դեպքերում նաև արաբական տարբեր պետությունների միջև հակասությունների սրումն ու դրանց լուծմանը միտված քայլերը: Այս ենթագլխում կարևորվել է հատկապես ԱՊԼ անդամ երկրների մասնակցությամբ հակամարտությունների խաղաղ կարգավորման գործում կազմակերպության դերակատարման ուսումնասիրությունը: Քննական մոտեցում է ցուցաբերվել ԱՊԼ գործունեության արդյունավետության գնահատման տեսանկյունից: Առանձին հետազոտության է ենթարկվել միջարաբական միասնականության ու համագործակցության ձախողումներում կազմակերպության վրիպումներն ու դրանց խորքային պատճառները:

Աշխատանքի չորրորդ գլխի երկրորդ ենթաբաժնում՝ **«Ծոցի համագործակցության խորհուրդ (ԾՀԽ). նպատակներ և գործունեություն»,** միջարաբական բազմակող համագործակցությունն ուսումնասիրվում է մեկ այլ կազմակերպության՝ ԾՀԽ շրջանակում: Կարևորվում է Ծոցի տարածաշրջանն ու ԾՀԽ գործունեությունը միջարաբական, տարածաշրջանային և միջազգային հարաբերությունների առանցքում: Համեմատականներ են անցկացվում Արաբական պետությունների լիգայի և Ծոցի համագործակցության կազմակերպության գործունեության միջև՝ հատկապես միջարաբական համագործակցության ընդլայնման և ամրապնդման գործում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ մեջ, ամփոփելով ատենախոսության հիմնական արդյունքները, ատենախոսը եզրակացնում է.

1. Մինչև 1991 թ. ընկած ժամանակահատվածում միջարաբական հարաբերություններն աչքի էին ընկնում ինչպես որոշ դեպքերում հակասությունների սրմամբ, այնպես էլ մի շարք հարցերում՝ համագործակցության դրսևորումներով: Փաստենք, որ արաբական տարբեր երկրներ առաջնորդվում էին իրենց պետական շահերով, որոնք հաճախ հակասության մեջ էին միջարաբական ընդհանրական շահերին: Արաբական տարբեր երկրների արտաքին քաղաքականության վրա զգալի ազդեցություն էին թողնում ինչպես ներարաբական, այնպես էլ տարածաշրջանային և միջազգային տարբեր գործոններ: Միջարաբական համագործակցության ընդլայման և խորացման վրա բացասական ազդեցություն էին ունենում ինչպես առանձին արաբական երկրների տարբեր հարցերում միմյանց հակասող մոտեցումները, այնպես էլ տարածաշրջանային և ոչ տարածաշրջանային երկրների ուղղակի և անուղղակի ճնշումները:

2. Թեև 1991 թ. Մադրիդի համաժողովը չհանգեցրեց մերձավորարևելյան հակամարտության համապարփակ խաղաղ կարգավորմանը, սակայն այն ուղի հարթեց խաղաղ կարգավորման հետագա գործընթացի համար, որը հետագայում շարունակվեց երկու զուգահեռ ուղղություններով՝ բազմակողմ (Իսրայելի, տարածաշրջանի արաբական

երկրների և տարածաշրջանից դուրս այլ երկրների մասնակցությամբ) և երկկողմ (Իսրայելի և իր արաբ հարևանների միջև): Առաջին անգամ բանակցային սեղանի շուրջ նստեցին հակամարտության բոլոր կողմերը: Համաժողովն ի ցույց դրեց նաև արաբական տարբեր երկրների պաղեստինյան հիմնահարցի նկատմամբ դիրքորոշումների տարբերություններն ու հնարավոր համագործակցության հեռանկարները:

3. 1991-2011 թթ. աչքի ընկան պաղեստինյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված ակտիվ քայլերով, սակայն արդյունքը չէր կարող գոհացուցիչ լինել քանի դեռ արաբական պետություններն ու պաղեստինյան քաղաքական կազմավորումները միասնական դիրքորոշում չէին որդեգրել խնդրի կարգավորման շուրջ: Արաբական տարբեր երկրների վարչակարգերը միակարծիք չէին պաղեստինյան հիմնախնդրի կարգավորման հարցում, իսկ պաղեստինյան քաղաքական կազմավորումներն իշխանության համար պայքարը գերադասում էին անկախության համար միասնական պայքարից: Գործնականում՝ պետական ու անձնական շահերն ավելի բարձր դասվեցին համաարաբական շահերից: 1990-ականների ընթացքում արաբական առանձին երկրներ՝ մասնավորապես Հորդանանը (1994 թ.) փորձեցին խաղաղություն հաստատել Իսրայելի հետ՝ առաջնորդվելով սեփական ազգային շահերով: Արաբական տարբեր երկրների Իսրայելի հետ խաղաղության հաստատման անջատ փորձերն այսուհետ աստիճանաբար սկսեցին հանդուրժողաբար ընդունվել արաբական աշխարհում:

4. Անհրաժեշտ է տարանջատել արաբական տարբեր երկրների Իսրայելի նկատմամբ հռետորաբանությունը՝ իրական գործողություններից: Արաբական երկրների համար Իսրայելի դեմ հանդես գալն ազգային հպարտության պես մի բան էր, սակայն յուրաքանչյուր արաբական երկիր ուներ իր ներքին դրդապատճառները: Հարուստ գաղութային անցյալ ունեցող արաբական երկրները, նույնիսկ անկախանալուց հետո, բախվեցին ներքին (արմատական իսլամականներ, սոցիալիստներ, բաասականներ և այլն) և արտաքին (ԱՄՆ, ԽՍՀՄ, մյուս արաբական երկրներ) խնդիրների հետ: Իսրայելի ի հայտ գալով՝ պայքարը վերջինիս դեմ դարձավ արաբական երկրների քաղաքական կյանքի կարևոր բաղադրիչներից մեկը: Հակաիսրայելական դիրքորոշում ցուցաբերելով հանդերձ՝ արաբական մի շարք երկրներ իրականում փորձում էին (իսկ ոմանք նույնիսկ հաջողեցին) փոխշահավետ խաղաղություն հաստատել Իսրայելի հետ:

5. 1990-ականների վերջից արաբ-իսրայելական հարաբերություններում զգալի դեր սկսեց խաղալ Իրանը: Վերջինիս, որպես տարածաշրջանային ազդեցիկ ուժի ի հայտ գալով, արաբական աշխարհում նոր թափ ստացավ հակաիսրայելական պայքարը, որի դրսևորումներից էր նաև 2006 թ. Լիբանանում Իսրայելի «Հիզբալլահ» շիայական շարժման դեմ

ռազմական գործունեությունները: Սակայն, Իրանի ազդեցության մեծացման հետևանքով հավելյալ բաժանարար գծեր ստեղծվեցին նաև միջարաբական հարաբերություններում՝ ավելի խորացնելով արդեն իսկ գոյություն ունեցող հակասությունները:

6. 1990-ականներին և 2000-ականների սկզբին միջարաբական հարաբերությունների վրա էական ազդեցություն ունեցան 1990-91 թթ. Ծոցի 2-րդ ճգնաժամը և 2003 թ. ԱՄՆ Իրաք ներխուժումը: Վերոնշյալ գործընթացները վերջնականապես խարխլեցին արաբական միասնության գաղափարը: Արաբական երկրները չկարողացան որևէ հանգուցային լուծում տալ իրաքյան ճգնաժամին, ինչը հանգեցրեց վերջինիս միջազգայնացմանը: Խախտվեց տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունն ու հավասարակշռությունը, և Մերձավոր Արևելքում ռազմաքաղաքական նոր իրավիճակ ստեղծվեց: Վերոնշյալ ճգնաժամերն էլ ավելի նպաստեցին արաբական աշխարհի մասնատմանն ու թուլացմանը:

7. 1990-91 թթ. Ծոցի 2-րդ ճգնաժամը միջարաբական հարաբերությունների տեսանկյունից, չնայած դրանցում խորացած բարդություններին, ունեցավ նաև դրական հետևանքներ: Ձևավորվեց Սիրիա-Եգիպտոս-Սաուդյան Արաբիա առանցքը, որն իրական հնարավորություն տվեց արաբ-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման հետագա գործընթացի համար: Սիրիայի ղեկավարները սովորաբար դիտարկում էին Սաուդյան Արաբիան իբրև «արևմտյան ազդեցության գոտի», սակայն 1990-91 թթ. Ծոցի պատերազմից հետո այդ կարծրատիպը կոտրվեց: Սիրիան համաձայնեց գնալ հարաբերությունների բարելավման Սաուդյան Արաբիայի հետ՝ ի պատասխան ստանալով ֆինանսական աջակցություն: Քեմփդևիդյան համաձայնագրերից հետո Սաուդյան Արաբիան դարձավ Սիրիային ամենամեծ ֆինանսական օժանդակություն ցուցաբերող երկիրը: Սիրիա-Եգիպտոս-Սաուդյան Արաբիա առանցքը դարձավ տարածաշրջանում այդ տարիների ամենանշանակալի համագործակցության ձևաչափը:

8. 2006 թ. լիբանանյան ճգնաժամի ընթացքում արաբական երկրները կրկին չդրսևորեցին միասնականություն: Այդ երկրներից յուրաքանչյուրն իր շահերից և արտաքին քաղաքական առաջնահերթություններից ելնելով արձագանքեց 2006 թ. լիբանանյան ճգնաժամին: Այս հակամարտությունն ի ցույց դրեց նաև արաբական-իսլամական աշխարհում առկա սունիի-շիա հակասությունների սրման իրողությունը: Ակնհայտ էր, որ Լիբանանում «Հիզբալլահ» շարժման ազդեցությունն ու գործունեությունը շատ արաբական երկրներ ընկալում էին որպես Իրանի ազդեցության տարածում արաբական երկրներում՝ տվյալ դեպքում Լիբանանում:

9. Ընդհանուր առմամբ՝ արաբական երկրները և Արաբական պետությունների լիգան չկարողացան կարգավորել 1990-ականների սկզբին

Իրաքի ու Քուվեյթի միջև գոյություն ունեցող հակասությունները, ինչը հանգեցրեց պատերազմի: Նրանք չկարողացան ինքնուրույն կարգավորել իրավիճակը, որի հետևանքով հակամարտությանը միջամտեցին միջազգային կոալիցիայի ուժերը՝ ստեղծելով արտաքին միջամտության վտանգավոր նախադեպ: Իրաքի՝ Քուվեյթ ներխուժումը ևս մեկ անգամ ի ցույց դրեց միջարաբական հարաբերությունների բարդ ու հակասական բնույթը:

10. 1991-2011 թթ. Մերձավոր Արևելքում ընթացող զարգացումներն աչքի ընկան ճգնաժամերով, հակամարտությունների խորացմամբ, արտաքին ներխուժումներով, արաբ-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում առարկայական քայլերով, միջարաբական համագործակցության և միևնույն ժամանակ հակասությունների սրման դրսևորումներով: Ինչպես 1990-1991 թթ. Ծոցի 2-րդ ճգնաժամի, այնպես էլ արաբ-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում ու 2006 թ. լիբանանահիսրայելական պատերազմի ժամանակ արաբական երկրները չկարողացան դրսևորել համախմբվածություն և միասնականություն: Առաջնահերթ շարունակեցին մնալ արաբական առանձին երկրների շահերն ու արտաքին և ներքին քաղաքականության սեփական օրակարգերը: Թեև այս ժամանակահատվածում ականատես եղանք միջարաբական համագործակցության իրական քայլերի ևս, որոնք որոշ դեպքերում նույնիսկ հաջողություններ գրանցեցին, սակայն դրանք առանձին դեպքեր էին և չէին կրում համակարգային բնույթ:

11. Միջարաբական համագործակցության իրական քայլերի շարքում կարևոր տեղ ունի Արաբական պետությունների լիգայի և Ծոցի համագործակցության խորհրդի ձևավորումը և գործունեությունը: Փաստենք, որ Արաբական պետությունների լիգան, չնայած ոչ այնքան արդյունավետ գործունեությանը, մշտապես փորձել է նպաստել արաբական միասնության կայացմանն ու արաբական տարբեր երկրների միջև խաղաղ ճանապարհով հակասությունների հաղթահարմանը: Ի հեճուկս սպասելիքների՝ ԱՊԼ-ն, չկարողացավ վերաճել արաբական աշխարհը միավորող վերպետական կազմավորման, քանի որ առանձին արաբական երկրների շահերն ու հետապնդած նպատակները սովորաբար գերակա են համաարաբական ընդհանուր շահերի նկատմամբ: Արաբական տարբեր վարչակարգեր, նաև իրենց իշխանության երկարատև պահպանման ու դրան իրավակարգություն հաղորդելու նպատակով, թեև անդամակցում ու ակտիվորեն ներգրավված են ԱՊԼ տարբեր կառույցների գործունեության մեջ, սակայն մշտապես առաջնորդվում են իրենց սեփական երկրների և իշխանության պահպանման շահերով՝ գործնականում երկրորդական տեղ հատկացնելով արաբական համագործակցությանն ու միասնությանը:

12. Ինչպես Արաբական պետությունների լիգայի, այնպես էլ Ծոցի համագործակցության խորհրդի գործունեության վրա իրենց ուրույն

ազդեցությունն են թողել անդամ երկրների գաղափարական ու դինաստիական հակասությունները: Այնուամենայնիվ՝ ԾՀԽ-ը ունի ավելի ազդեցիկ կազմակերպության վերածելու ներուժ: Ի տարբերություն Արաբական պետությունների լիգայի՝ Ծոցի համագործակցության խորհուրդը միավորել է համանման հետաքրքրություններ ու շահեր ունեցող ավելի փոքրաթիվ արաբական երկրների, ինչը կազմակերպությանը հնարավորություն է տալիս ավելի ճկուն ու արդյունավետ գործել միջարաբական և միջազգային ասպարեզներում:

13. 2011 թ.-ից Մերձավոր Արևելքում ընթացող վերափոխումների բարդ փուլը մեծապես պայմանավորված է նաև ուսումնասիրվող ժամանակահատվածում տարածաշրջանում տեղի ունեցած գործընթացներով: 2011 թ. «Արաբական գարնան» բռնկման դրդապատճառներից մեկը միաբևեռ աշխարհի ձևավորումն էր՝ հետխորհրդային ժամանակահատվածում: Նշված շրջանում տարածաշրջանում միջազգային ուժերի ակտիվության աճ գրանցվեց, սակայն Իրաքի, Եգիպտոսի, Սիրիայի և Արաբական Արևելքի մյուս առաջատար երկրների իշխող վարչակարգերը չկարողացան միասնաբար դիմագրավել ընդհանուր մարտահրավերներին՝ ինչի արդյունքում բնակչության շրջանում վերջիններիս հանդեպ վստահության անկում նկատվեց, որն էլ իր հերթին առաջ բերեց իշխանափոխության պահանջ ու անկայունություն ողջ տարածաշրջանում:

Ատենախոսության թեմայով հեղինակի գիտական հրապարակումները

1. Ա. Առաքելյան, Միջարաբական տարաձայնություններն իրաքյան (2003թ.) պատերազմի շուրջ, ԿԱՆԹԵՂ. գիտական հոդվածներ, Երևան, 2017թ., էջ 103-117:
2. Ա. Առաքելյան, Միջարաբական համագործակցության խնդիրները Ծոցի պատերազմում (1990-91թթ.), ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ. XI-XII հոդվածների ժողովածու, Երևան, 2017թ., էջ 27-37:
3. Ա. Առաքելյան, Արաբական պետությունների լիգա. Միջարաբական համագործակցության ձախողու՞մ, թե՞ ձեռքբերում, ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ. գիտական հոդվածների ժողովածու 8, Երևան, 2017թ., էջ 414-426:
4. Ա. Առաքելյան, Պաղեստինի հիմնախնդիրը միջարաբական հակասությունների կիզակետում (1992-2011թթ.), ԵՊՀ. Պատմություն եվ մշակույթ. հայագիտական հանդես, Երևան, 2017թ., էջ 328-332:
5. Ա. Առաքելյան, Լիբանանահսրայելական պատերազմը (2006թ). Միշարք մոտեցումներ և դիրքորոշումներ, ԱԿՈՒՆՔ. գիտական հոդվածների ժողովածու թիվ 2 (16), Երևան, 2017թ., էջ 73-79:

6. Ա. Առաքելյան, Ծոցի արաբական պետությունների համագործակցության խորհուրդը, ԼՐԱԲԵՐ. հասարակական գիտությունների 1, Երևան, 2017թ., էջ 127-135:
7. Ա. Առաքելյան, Քեմփ-Դևիդի (1979թ.) ժառանգությունը. Իսրայելի հետ անհատական խաղաղության հաստատման հետագա փորձերը, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն. ԿԱՃԱՌ. գիտական տարեգիրք, Երևան, 2017թ., էջ 178-183:

АНДРАНИК РАФАЭЛОВИЧ АРАКЕЛЯН

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ МЕЖАРАБСКОГО СОТРУДНИЧЕСТВА НА БЛИЖНЕМ ВОСТОКЕ 1991-2011 гг.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 «Всемирная история».
Защита состоиться 4-ого июля 2023 года в 12:00, на заседании специализированного совета 006 «Всемирная история» действующего при Институте востоковедения Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

Диссертация посвящена исследованию ключевых проблем межарабского сотрудничества в 1991-2011 гг.

Межарабские отношения являются важным составляющим международных отношений, и их исследование имеет, как научное, так и политическое и практическое значение. В разные времена межарабские отношения выделялись противоречивостью: от тесного сотрудничества до напряженности в отношениях. На современном этапе региональных преобразований трудно правильно воспринимать различные проявления межарабских отношений без разностороннего исследования ключевых проявлений межарабского сотрудничества.

Исследование многослойных межарабских отношений постоянно находилось в центре внимания историков, политологов и международоведов, так как противоречивыми проявлениями этих отношений обусловлены также многие мирополитические и микроэкономические события на Ближнем Востоке, в том числе, ход и развитие арабо-израильского конфликта и вопрос урегулирования Палестинского вопроса, считающегося его важным составляющим.

В рамках диссертации впервые предпринята попытка комплексного исследования ключевых развитий на Арабском Востоке в 1991-2011гг., с использованием разноязычных источников и научной литературы, рассматривая их с точки зрения многослойного межарабского сотрудничества.

Было проведено комплексное и разностороннее исследование особенностей межарабских отношений за рассматриваемы период, влияющие на них региональные и нерегиональные факторы и воздействия.

Развитие межарабских отношений в рассматриваемый период рассмотрен с помощью разностороннего изучения, как противоречий, так и попыток сотрудничества.

Работа состоит из введения, четырех глав, которые, в свою очередь, подразделяются на подразделы, заключения, списка использованных источников

и литературы и приложений 1 и 2, в которых представлены уставы Лиги арабских государств и Совета сотрудничества арабских государств Залива в переводе на армянский язык.

Во введении говорится об актуальности темы и целях работы, обосновывается научная новизна, практическая значимость работы и приводятся хронологические границы темы, краткий обзор использованных источников и литературы.

Первая глава диссертации: «ПАЛЕСТИНСКОЕ НАПРАВЛЕНИЕ МЕЖАРАБСКИХ ОТНОШЕНИЙ. ПАЛЕСТИНСКАЯ ПРОБЛЕМА В ПОВЕСТКЕ ДНЯ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ АРАБСКИХ СТРАН», состоит из трех подразделов, в которых рассматриваются позиции арабских стран к палестинской проблеме, имеющиеся в арабском мире точки зрения к вопросу и их различия.

Во второй главе работы: «АРАБСКИЙ МИР – ИЗРАЕЛЬ. ОТ ПРОТИВОРЕЧИЙ ДО ПОПЫТОК УСТАНАВЛЕНИЯ МИРА», рассматриваются попытки отдельных стран арабского мира (Египет, Ливия, Иордания) заключить сепаратный мир с Израилем, углубляющиеся в результате этого противоречия и процессы поляризации в арабском мире.

Третья глава диссертации: «ИРАК И ОБОСТРЕНИЕ МЕЖАРАБСКИХ ОТНОШЕНИЙ», посвящена исследованию процессов обострения межарабских противоречий и изменений соотношения сил в регионе, обусловленных вторым кризисом Залива - вторжением Ирака в Кувейт в 1990-1991гг. и Соединенных штатов в Ирак в 2003г., и их последствий.

В четвертой главе диссертации: «РАЗНОСТОРОННЕЕ МЕЖАРАБСКОЕ СОТРУДНИЧЕСТВО», рассматриваются 2 организации, объединяющие арабские страны – Лига арабских государств и Совет сотрудничества арабских государств Залива, их цели и деятельность, анализируются особенности разнохарактерного межарабского сотрудничества, выставляются их эффективность и причины неэффективности.

В ЗАКЛЮЧЕНИИ подводятся основные итоги диссертации.

В ПРИЛОЖЕНИЯХ 1, 2 представлены уставы Лиги арабских государств и Совета сотрудничества арабских государств Залива в переводе на армянский язык.

ANDRANIK RAFAEL ARAKELYAN

MAIN PROBLEMS OF INTER-ARAB COOPERATION IN THE MIDDLE EAST 1991-2011

Dissertation for the Scientific degree of the Doctor of Historical Sciences, in the Field of "World History" 07.00.02.
The defense will take place on July 4 2023 at 12:00, at the meeting of the specialized council 006 "World History" operating under the Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

The dissertation is dedicated to the study of 1991-2011 key issues of inter-Arab cooperation.

Inter-Arab relations are an important component of international relations and their study has both scientific, political, and practical significance. Inter-Arab relations have been marked by controversy at various times, from close cooperation to the tension of relationships. At the current stage of regional transformations, it is difficult to properly understand the various manifestations of inter-Arab relations without multi-faceted research on the key manifestations of inter-Arab cooperation in the period under study.

The study of multi-layered inter-Arab relations has always been at the center of the attention of historians, political scientists, and internationalists, because many geopolitical and geo-economic realities of the modern Middle East are conditioned by the contradictory manifestations of these relations, including the course and development of the Arab-Israeli conflict and its important component, the issue of settlement of the Palestinian issue.

Within the framework of the dissertation, for the first time, an attempt was made to comprehensively study the key developments taking place in the Arab East in 1991-2011, using multilingual sources and scientific literature, considering them from the perspective of multi-layered inter-Arab cooperation. During the period under study, the features of inter-Arab relations were comprehensively and completely researched regional and non-regional factors and influences affecting them.

The development of inter-Arab relations during the mentioned period has been observed with a multifaceted study of both conflicts and attempts at cooperation.

The work consists of an introduction, four chapters, which in turn are subdivided into sub-chapters, a conclusion, a list of used sources and literature, and appendices 1 and 2, in which the statutes of the League of Arab States and the Gulf Cooperation Council are presented in Armenian translation.

The INTRODUCTION describes the relevance of the topic and the objectives of the work, justifies the scientific novelty, and the practical significance of the work,

and gives the chronological boundaries of the topic and short theories of the sources and literature used.

The 1st chapter of the dissertation: "THE PALESTINIAN DIRECTION OF INTER-ARAB RELATIONS. THE BASIC ISSUE OF PALESTINE ON THE FOREIGN AGENDA OF THE ARAB COUNTRIES ", consists of 3 sub-chapters, in which the positions of the Arab countries towards the Palestinian issue, the views in the Arab world and their differences are studied.

The 2nd chapter of the work: "ARABIC WORLD - ISRAEL. FROM CONFLICTS TO PEACE ESTABLISHMENT ATTEMPTS", attempts to establish a separate peace with individual Arab countries: Egypt, Lebanon, Jordan, and Israel, as well as the deepening contradictions and polarization process in the Arab world, as a result, are examined.

The 3rd chapter of the dissertation examines «IRAQ AND THE TENSION OF INTER-ARAB CONFLICTS», 1990-1991: the second crisis in the Persian Gulf: Iraqi Kuwait and the process of the tension of inter-Arab conflicts caused by the US invasion of Iraq in 2003, the rebalancing of forces in the region, and its consequences.

The fourth chapter of the dissertation: "INTER-ARAB MULTILATERAL COOPERATION", examines the 2 organizations uniting the Arab countries, the League of Arab States and the Gulf Cooperation Council, their goals and activities, analyzes the features of inter-Arab multilateral cooperation, shows their effectiveness and the reasons for their ineffectiveness.

The main findings of the dissertation are summarized in the CONCLUSION.

APPENDIX 1, 2 presents the charters of the League of Arab States and the Gulf Cooperation Council in Armenian translation.